

ԲԱԲԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՁ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ)

Արտատպ. «Բագմավէպ» ամսագրէն, 1958

Գրեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

1951ին, Elma Marin արարեւրէնէ թարգմանելով՝ Տրատարակեց եւ ծանօթագրեց Ալ-Մուտազիմ Պարտատի Սալիֆային տիրակալութեան շրջանին (833-842) պատմութիւնը, առնելով Ապու Ճաֆար Մուհամմատ Պ. Ճարիր Ալ-Տարարիի ընդարձակ դորձէն :

Տարարի կարեւորագոյն աղբիւրն է մեր պատմութեան մէկ էջին, այսինքն Բարակի Հայաստան ապաստանելուն, իր եղբոր հետ միասին, եւ Սահլ Իպն Մնրատէ՝ ալ-Աֆշին արար զօրավարին յանձնուելուն : Այս գէպը պատահեցաւ 837ին : Տարարի, որ հեղինակն է արժէքաւոր պատմութեան մը, այս գէպէն զրեթէ երկու տարի վերջ ծնած ըլլալով, կրցեր է վատահելի տեղեկութիւններ հաւաքել եւ իր պատմութեան մէջ ընդելուզել :

Տարարիի պատմութիւնը ճոխ է Հայոց եւ Հայաստանի վերաբերող նիւթերով . սակայն ես հոս միայն նկատի պիտի ունենամ Բարակի Հայաստան ապաստանելուն եւ յանձնուելուն մասը, որոնք զժրախտարար մեր պատմիչները թէ՛ անկատար եւ թէ՛ սխալ ներկայացուցած են :

Տարարի կը գրէ թէ Բարակ պարտուեցաւ ալ-Աֆշինէ՝ Ատրպատականի մէջ . «Որուն վրայ, Բարակ իր երկու եղբայրներուն հետ, Ապու Ալլահ եւ Մուսափիեա, եւ իր մօր ու կիներէն մէկուն հետ, կոչուած ալ-Քալանդանիեա, ճամբայ ելաւ՝ թողլով ճանապարհը եւ երթալով գէպի Հայաստանի ուղղութեամբ » :

«Երկու հեծեալները եւ երկու լեռնականները (որոնք ճանապարհին վրայ կը հսկէին - Յ. Ք.) տեսան զանոնք եւ լուր ղրկեցին Ապու Սաճի հրամանին տակ զըտնուող զօրքերուն, ըսելով . Մենք ձիաւորներ տեսանք՝ որ սակէ անցան, սակայն չենք գիտեր թէ ով էին : Այն ատեն մարդիկ արշաւեցին եւ պնդեցին յառաջ, մինչեւ որ զանոնք (Բարակը) տեսան հեռուէն . անոնք աղբիւրի մը մօտ կեցած էին եւ անոր վրայ կը ճաչէին : Բայց երբ Անահաւորը (Բարակ) տեսաւ մարդիկը՝ ժամանակ չկորսնցուց . ան եւ իր հետեւորդները յառաջ ձիավարեցին եւ ան կրցաւ խուսափիլ . սակայն Մուսափիեա եւ Բարակի մայրն ու կիներ՝ որ անոր հետ էին՝ բռնուեցան : Բարակին գերիներէն մին խուսափեցաւ : Ապու Սաճ զրկեց Մուսափիեան եւ երկու կիները բանակատեղ, բայց Բարակ զնաց իր զացած ուղղութեամբ, մինչեւ որ հասաւ Հայկական լեռները եւ հոն ճամբորդեց աննշմար : Ան խիստ կարիք ունէր ուտեստի . սակայն բոլոր հայ ազնուականները կը հսկէին իրենց անմիջական մերձաւորութեանց եւ անոնց շրջակայքին վրայ, եւ իրենց պահակազօրքին հրամայած էին թոյլ չտալ ոեւէ մէկուն անցնիլ նախ քան անոնց ձերբակալուիլը եւ իրենց ինքնութեան հաստատուիլը . պահակազօրքի բոլոր հրամանատարները աչալուրջ էին » :

«Բարակ անօթեցաւ : Ան կը գտնուէր բարձրութեան մը վրայ, երբ յանկարծ